Արձանագրություն №2

«ՊՎԾ-ԳՀԾՁԲ-20/01» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում գնային առաջարկներ գնահատող հանձնաժողովի նիստի հայտերի բացման և գնահատման նիստի

Ք. Երևան 31.01.2020թ. ժամը 12:00

Նիստին մասնակցում էին՝

նախագահ՝ Կարեն Մարգարյան

անդամներ՝ Մանուկ Սահակյան

Լևոն Մուրադյան

Մովսես Ասրյան

Հայկ Խուրշուդյան

քարտուղար՝ Հասմիկ Ղազարյան

1"Տեղեկություն՝ ԳՀ ընթացակարգի հայտերի բացման մասին

1.1 Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության 2020 թվականի կարիքների բավարարման համար՝ **հանրային հեռախոսային ծառայությունների** ձեռքբերման նպատակով **«ՊՎԾ-ԳՀԾՁԲ-20/01»** ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հայտը բացվել է Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության շենքում, ք. Երևան, Մաշտոցի 47 հասցեում՝ http://www.armeps.am/ էլեկտրոնային կայքով, 2020 թվականի հունվարի 24-ին, ժամը 12:00-ին:

1.2. http://www.armeps.am/ էլեկտրոնային կայքով հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	Էլ. հասցե
1	«ՔրոսսՆեթ» ՍՊԸ	cross@cross.am
2	«Վեոն Արմենիա» ՍՊԸ	...corp_tender@beeline.am

2. Տվյալներ հայտը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

2.1 «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ի և «Վեոն Արմենիա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 Բոլոր մասնակիցները ներկայացրել են գնային առաջարկներ, շահույթի և ինքնարժեքի հաշվարկներ: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կնքված և ստորագրված են մասնակցի կողմից:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

4.1. Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

5. Տվյալներ նախահաշվային գնի մասին և յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝

	ՀՀ պետ. բյուջեով նախատեսված գինը	Չ/Բ	Առաջարկված գինը		
			Ինքնարժեք	ԱԱՀ	Ընդհանուրը
«ՔրոսսՆեթ» ՍՊԸ	3000 000	1	120000	24000	144 000
«Վեոն Արմենիա» ՍՊԸ	3000 000	1	2500 000	500 000	3000 000

6. Տվյալներ առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

6.1 Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշման հավելված 1-ի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջների՝ հիմք ընդունելով ներկայացրած ամենացածր գնային առաջարկը՝ հանձնաժողովը որոշեց՝

«ՊՎԾ-ԳՀԾՁԲ-20/1» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից համարել «ՔրոսսՆեթ» ՍՊԸ-ին:

6.2 Հայտերի բացման և գնահատման նիստի ժամանակ հանձնաժողովի կողմից արձանագրվեց, որ հրավերի պայմանագրի նախագծին կից տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում առկա է տեխնիկական բնութագրի թերություն, ինչը տարբեր մասնակիցների մոտ առաջացրել է ձեռքբերվող ծառայության մատուցման տարակերպ ընկալում, որի պատճառով գնային առաջարկները ներկայացվել են տարբեր տրամաբանություններով: Հրավերով չի պահանջվել նաև միավոր գնի բացվածքի

ներկայացում գնային առաջարկի հետ միասին, որի բացակայության դեպքում կառաջանան խնդիրներ մատուցված ծառայության դիմաց վճարման փուլում: Նշվածով պայմանավորված և նկատի ունենալով, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ հրավերում ներառված տեխնիկական բնութագիրը շտկման ենթակա չէ՝ հանձնաժողովը որոշեց նախաձեռնել ՀՀ կառավարության որոշման նախագծի պատրաստման գործընթաց՝ ընթացակարգը չկայացած հայտարարելու թույլտվության վերաբերյալ: Նախագծով կնախատեսվի չկայացած հայտարարել **«ՊՎԾ-ԳՀԾՁԲ-20/01»** ծածկագրով գնման ընթացակարգը և կկազմակերպվի նոր ընթացակարգ՝ արդեն շտկված բնութագրով:

7. **Տեղեկություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ**

Հայտի փոփոխություններ, հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի,օրվա և ժամի վերաբերյալ

Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա ՀՀ կառավարության համապատասխան որոշման կայացումից հետո, որի վերաբերյալ մասնակցության հայտ ներկայացրած կազմակերպություններին քարտուղարի կողմից կծանուցվի հայտով ներկայացված դիմումում առկա էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով:

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Կ.Մարգարյան

Անդամներ՝

---------- Լ. Մուրադյան

---------- Հ. Խուրշուդյան

---------- Մ. Ասրյան

---------- Մ. Սահակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Հ. Ղազարյան